შეფასებისა და გამოცდების ეროვნული ცენტრი

Ուսուցչի իրավասության հաստատում
հուլիս, 2019

# Թեստ կերպարվեստից և կիրառական արվեստից

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Գործնական աշխատանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թերթիկի վրա: Գործնական աշխատանքը (առաջադրանք 26) կատարելու համար Ձեզ բաժանել են մատիտ, ռետին և սրիչ:

Գործնական առաջադրանքի համար հատկացված թերթիկի վրա աշխատեք մատիտով: Մատիտ թույլատրվում է գործածել միայն այս առաջադրանքը կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 60:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

**№ 1-19 առաջադրանքների հրահանգ –** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր)- Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ. պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշան: Ոչ մի ուրիշ նշում ՝ հորիզոնական կամ ուղղաձիգ գծեր, շրջագծում և այլն, համակարգչային ծրագիրը չի ընկալում : Եթե ցանկանում եք պատասխանների թերթիկի վրա պատասխանը ուղղել , ամբողջությամբ գունավորեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը և հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը , որն ուղղել եք:

1. Ճարտարապետական ո՞ր տիպին  է պատկանում նկարի վրա ներկայացված ճարտարապետական եկեղեցու հատակագիծը:



ա) Եռակոնք

բ) Քառակոնք

գ)Ազատ խաչ

դ) Բազմաբսիդ

**2. Խորհրդանշորեն ի՞նչ է մարմնավորում Բրեյգելի ստեղծած հայտնի գեղանկարչական կոմպոզիցիան:**



ա) Մարդկանց աշխատանքի ծանրությունը

բ) Իրար նմանվող մարդկանց ողբերգական ճակատագրերը

գ) Մարդկանց խառնվածքի տեսակները

դ) Մարդկանց կողմից միմյանց աջակցելը

3. Ո՞րն է վրաց քրիստոնեական ճարտարապետության մեջ  բազմաբսիդ տիպի ճարտարապետության նմուշը:



ა) Սվետիցխովելին

ბ) Նիկործմինդան

გ) Ալավերդին

დ) Ջվարին

4. Ո՞ր առանձնահատկությամբ է  բնութագրվում պալեոլոգոսների ոճի նկարչությունը:



ա) Պատկերը հարթային  է, ուրվագծային նկարը կոպիտ և անկյունավոր, պատկերների համամասնությունները խախտված, ձևերը հասարակ և պարզունակ:

բ) Կոմպոզիցիան ազատ և դինամիկ է, նկարը կատարելագործված, համամասնական և պլաստիկ, ձևերը ռեալիստական և ընդհանրացված, կոմպոզիցիաները զուրկ են մանրակրկիտ պատմողականությունից:

գ) Կոմպոզիցիան բազմապատկեր է, նկարը դինամիկ և բեկոտված, պատկերները չափազանցված, ձևերը գեղանկարչորեն մոդելացված, ստեղծվում է տարածության պատրանք, կոմպոզիցիայի պատմողականությունն ընթանում է մանրամասնություններով:

դ) Պատկերը կոպիտ է և պաճուճազարդ, կոլորիտը  աղքատիկ, կոմպոզիցիաները չափից ավելի դեկորատիվ, մոնումենտալ գեղանկարչությունն իր բնույթով մոտ է  սրբանկարչությանը:

**5. Ո՞վ է լուսանկարի վրա ներկայացված քանդակային կոմպոզիցիայի հեղինակը։**



ա) Անտոնիո Կանովան

բ) Լորենցո Բերնինին

գ) Միքելանջելո Բուոնարոտտին

դ) Օգյուստ Ռոդենը

6. Ո՞ր գեղարվեստական յուրահատկություններով է բնութագրվում Օպիզա տաճարի ռելիեֆը:



ա) Ռելիեֆային կոմպոզիցիան ներկայացնում է անատոմիայի գիտելիքների հիման վրա ստեղծված մարդկանց ծավալային պատկերները:
բ) Ռելիեֆային կոմպոզիցիան հարթագծային է, պատկերների համաչափությունները խախտված են և էքսպրեսիվ:
գ) Կոմպոզիցիայի դինամիզմը ստեղծվում է վարագուրման պատկերման յուրահատկություններով:
դ) Պատկերների դեմքերը իրատեսական են, վարպետը ներկայացնում է կերպարների դիմանկարային բնութագրում:

7. Ո՞ր տաճարի ձևավորման համակարգում է ընդգրկված լուսանկարի վրա ներկայացված դեկորատիվ կոմպոզիցիան:



ა) Գելաթի

ბ) Սվետիցխովելի

გ) Սամթավրո

დ) Սամթավիսի

**8. Որոշեք, ո՞ր հայտնի կառույցն է ներկայացված լուսանկարի վրա:**



ա) Բուդապեշտի խորհրդարանի շենքը

բ) Սանտա Մարիա դել Ֆյորեի տաճարը

գ) Պալացո Դուկալեն

դ) Վերսալը

9. Տրված հատվածի համաձայն նշեք արվեստի նմուշի հեղինակի անունը:



ա) Լորենցո Գիբերտի

բ) Ֆիլիպո Բրունելեսկի

գ) Ալբերտո Ջակոմետտի

դ) Անդրեա դել Վերոկկիո

10. Ո՞ր դարաշրջանի և/կամ գեղարվեստական հոսանքի նմուշ է ներկայացված տրված նկարի վրա:



ա) Գոթիկա

բ) Նեոկլասիցիզմ

գ) Բարոկկո

դ) Ռոմանտիզմ

11. Ո՞վ է լուսանկարի վրա ներկայացված նկարի հեղինակը:



ა) Լադո Գուդիաշվիլին

ბ) Մերաբ Աբրամիշվիլին

გ) Իրակլի Գամրեկելին

დ)Սերգո Քոբուլաձեն

**12. Ո՞ր գեղարվեստական յուրահատկությունը *<u>բնորոշ չէ</u>* ներկայացված արվեստի նմուշին:**



ա) Դեկորատիվ զարդարանքի համաչափ, հավասարակշռված բնույթ

բ) Ցվարայի տեխնիկայով ստեղծված դեկորատիվ զարդարանք

գ) Ստիլիզացված պատկերներ

դ) Քանդակադրոշմի զարդանախշի բազմազանությունը:

13. Ո՞ր գեղարվեստական հոսանքին է պատկանում ներկայացված արվեստի նմուշը:



ա) Ֆուտուրիզմ

բ) Ֆովիզմ

գ) Մոդեռն

դ) Փոփ արտ

14. Ո՞վ է Նյու Յորքի Սողոմոն Գուգենհայմի անվան ժամանակակից թանգարանի ճարտարապետը:



ա) Զահա Հադիդը

բ) Ֆրենկ Լլոյդ Ռայթը

գ) Նորման Ֆոսթերը

դ) Լե Կորբյուզիեն

**15. Ո՞ր գեղարվեստական հնարքը *բնորոշ չէ* Յան Վերմեերի «Ջրի կժով աղջիկը» նկարին:**



ա) Վառ ֆակտուրային վրձնահարվածները

բ) Կոմպոզիցիայի անլրիվությունը

գ) Առջևի պլանի մանրամասնումը

դ) Արծաթագույն կոլորիտը

**16. Ներկայացված արվեստի նմուշի դետալի համաձայն անվանեք ստեղծագործության հեղինակին:**



ա) Անրի Մատիս

բ) Պաբլո Պիկասո

գ) Խուան Միրո

դ) Էդվարդ Մունկ

**17. Ո՞ր պարզաբանումն է արտահայտում  գծի յուրահատկությունը ներկայացված արվեստի նմուշների վրա:**





ա) Առաջին նկարում գիծը ծառայում է թեթև հակադրության էֆեկտ ստեղծելուն, այն դեպքում, երբ երկրորդ նկարում գիծն օգտագործված է տարածության պատրանք ստեղծելու համար:
բ) Առաջին նկարում գիծն օգտագործվում է պատկերի ձև, իսկ երկրորդ նկարում մակերևույթի ժանյակաձև, փափուկ ֆակտուրա ստեղծելու համար:
գ) Առաջին նկարում գիծը ծառայում է համաչափության և հավասարակշռության պահպանմանը, իսկ երկրորդ նկարում՝  ստվերի էֆեկտ է ստեղծում:
դ) Առաջին նկարում գիծը նեգատիվ  տարածքի   սահմանագծողն է, իսկ երկրորդ նկարում  պատրանքայնորեն տարածության մեջ հավաքման կետ ստեղծելու միջոց:

**18. Ո՞ր գեղարվեստաոճային յուրահատկություններով է բնութագրվում նկարում տրված վրաց միջնադարի քանդակադրոշմի (չեկանկա) արվեստի նմուշը:**



ա) Բարձր ռելիեֆով կատարված համաչափ կոմպոզիցիայում ֆիգուրային պատկերը ծավալային է և համամասնական:

բ) Բարձր ռելիեֆով կատարված պլաստիկ պատկերների և կատարելագործված զարդանախշային մոտիվների սինթեզով վարպետը ստեղծում է վրացական քանդակադրոշմի հիանալի նմուշ:

գ) Գծային, դեկորատիվ բնույթի ցածր ռելիեֆով կատարված պատկերները առանձնանում են չափազանցված ձևերով :

դ) Բարձր ռելիեֆով կատարած գոտկատեղից վերև երկարացված պատկերներին ձևերի չափազանցումն ավելի սեթևեթություն է հաղորդում, քան արտահայտչականություն:

**19. Ո՞ր տերմինն է համապատասխանում XX դարի գեղարվեստական ոճերի և հոսանքների ընդհանուր անվանմանը, որը ժխտում է ավանդույթները և նոր ուղիներ փնտրում արվեստում:**

ա) Գլոբալ

բ) Ավանգարդային

գ) Ֆուտուրիստական

դ) Անտագոնիստական

**№ 20-25 առաջադրանք** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 միավոր): **«Ճշմարիտ է - Սխալ է»**

**Առաջադրանքի հրահանգ–**ուշադիր ծանոթացեք տրված դրույթներին, եթե համարում եք, որ դրույթը ճիշտ է, ապա նշեք համապատասխան վանդակը: Նման դեպքում մեկնաբանություն չի պահանջվում: Եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա նշեք համապատասխան վանդակը և հատուկ հատկացված տեղում գրեք ճիշտ ձևակերպումը:

**Դիտողություն.** Եթե կարծում եք, որ ձևակերպումը սխալ է և գտնում եք, որ վկայության մեջ տրված պարզաբանումը ինքնին ճիշտ է ձևավորված, թեև չի ներկայացնում տրված տերմինի և/կամ բառի բացատրությունը, ապա անփոփոխ թողեք պարզաբանումը և այդ նույն պարզաբանման համար փնտրեք և համապատասխանեցրեք համարժեք տերմին և/կամ բառ:

**Նմուշ.**



20. XVII դարի հոսանքը եվրոպական արվեստում, որին բնորոշ է անտիկ մշակույթի ազդեցությունը, վերածնունդն է:

21. Ներկայացված դիցաբանական  կերպարը հին եգիպտական մշակույթի նմուշ է հանդիսանում:



22. Ներկայացված նկարի վրա պատկերների չափազանցման միջոցով նկարիչները  նկարին արտահայտչականություն են հաղորդում:



23. Հաստոցային նկարչության մեջ նատյուրմորտը, որպես անկախ նկարչական ժանր  ձևավորվել է  XX դարասկզբին:

24. Վերածննդի դարաշրջանի նկարչությանը բնորոշ է ծանր աշխատանքից մկանոտ մարմիններով ստեղծված կոմպոզիցիայի դինամիզմն (շարժունություն) ու կոնտրաստային լուսավորվածությունը:

25. Շենքի ճակատը պսակող եռանկյունի տարածքը, որը երիզված է երկլանջ տանիքով կոչվում է ֆրոնտոն:

**№ 26 Առաջադրանք** (5 միավոր). **Գործնական աշխատանք**

Հրահանգ – Որպես նմուշ ներկայացված է Անրի Մատիսի գծանկարչական էսքիզը: Ըստ նմուշի ստեղծեք հարթային պատկերի ծավալային մեկնաբանություն (ինտերպրետացիա): Տարբեր ֆակտուրաներ ունեցող առարկաները տարբերակեք գուներանգության միջոցով: Կոմպոզիցիոն բաշխման սկզբունքի նախատեսմամբ պատկերը համապատասխանորեն զետեղեք նկարի հարթության վրա: Առաջադրանքը կատարեք գործնական աշխատանքի համար հատկացված թղթի վրա:



**№ 27-31 Առաջադրանք** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր). ***Ժամանակագրության որոշում:***

**Առաջադրանքի հրահանգ –** դասավորեք (հնագույնից մինչև նորագույն) կերպարվեստի նմուշները ըստ դրանց ստեղծման ժամանակի: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Նկատի ունեցեք, որ աղյուսակում գրվում է միայն ընտրած միավորի համապատասխան թվանշանը:

27. Դասավորեք նկարները, ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3.



4.



28. Դասավորեք ներկայացված ճարտարապետական նմուշները, ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3.



4.



**29. Դասավորեք գեղարվեստական հոսանքները ժամանակագրական հաջորդականությամբ:**

1. Պոստիմպրեսիոնիզմ
2. Կլասիցիզմ
3. Օպ-արտ
4. Սյուրռեալիզմ

30. Դասավորեք ներկայացված պատմական անձանց դիմանկարները, ըստ դրանց ստեղծման ժամանակի:

1.



2.



3



4.



**31. Դասավորեք ինքնադիմանկարները, ըստ դրանց ստեղծման ժամանակի:**

1. 

2. 

3 

4. 

**№ 32 Առաջադրանք** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան ՝ 1 միավոր). **Համապատասխանության որոշում**

**Առաջադրանքի հրահանգ -** A սյունակում տրված կերպարվեստի տեխնիկաները համապատասխանեցրեք B սյունակում տրված արվեստի նմուշներին: Նկատառեք, որ մեկ տեսակին համապատասխանում է միայն <u>մեկ նմուշ</u>:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| **A** | 1. Օֆորտ | 2. Պաստել | 3. Որմնանկար | | |
| **B** | ა.  | ბ.  | გ.  | დ.  | ე.  |

**№ 33 Առաջադրանք** (Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1 միավոր)**. Համապատասխանության որոշում**

**Առաջադրանքի հրահանգ** – A սյունակում տրված գեղարվեստական հոսանքներին համապատասխանեցրեք B սյունակում տրված կերպարվեստի նմուշները: Նկատառեք, որ մեկ հոսանքին համապատասխանում է միայն <u>մեկ նմուշ</u>:

| A | B |
| --- | --- |
| 1. Ռոմանտիզմ<br>2. Մոդեռն<br>3. Սիմվոլիզմ | ա.  բ.  գ.  դ.  ե.  |

**№ 34 Առաջադրանք** (4 միավոր). **Արվեստի որոշ նմուշներ մտածված են, որպես աստվածաշնչյան սյուժեի մեկնաբանություն (ինտերպրետացիա): Տրված նկարներից ընտրեք արվեստի նմուշներից մեկը և կապակցեք այն կոնկրետ սյուժեի հետ: Վերլուծեք ստեղծագործությունն ու որոշեք՝**

1.



2.



3.



4.



**ա.** Արտահայտչական և կոնտեքստուալ առանձնահատկությունները, որոնք բացահայտում են այս ստեղծագործության կապը ձեր կողմից նշված սյուժեի հետ:

**Յ.** Ո՞ր գեղարվեստական հնարքների միջոցով է արտահայտում հեղինակը ստեղծագործության գաղափարը:

**№ 35 Առաջադրանք** (15 միավոր). ***Արվեստի նմուշի նկարագիր-վերլուծություն***.
Իմաստավորեք, վերլուծեք և գնահատեք  ստորև ներկայացված արվեստի նմուշները



**Կատարեք առաջադրանքը ըստ ցուցումների.**

**35.1** (3 միավոր) Նկարագրեք և բնութագրեք կոմպոզիցիան,  ո՞ր ժանրին է պատկանում տրված կոմպոզիցիան:  Նյութի և տեխնիկայի հիման վրա որոշեք, թե  կերպարվեստի ո՞ր ճյուղի նմուշն է ներկայացված:

**35.2** (3 միավոր) Վերլուծեք և հակիրճ ձևակերպեք, թե կերպարվեստի ի՞նչ արտահայտչական միջոցներ ու հնարքներ է  կիրառում հեղինակը նկարի վրա գեղարվեստական կերպարի բնույթ ստեղծելու համար:



**35.3** (3 միավոր) Գեղարվեստաոճական բնութագրիչների հիման վրա սահմանեք ստեղծագործության ստեղծման ժամանակը, որոշեք, թե ո՞ր երկրի արվեստի նմուշն է ներկայացված, նշեք հեղինակի անունը:

**35.4** (3 միավոր) Գնահատեք աշխատանքը՝ արտահայտեք Ձեր վերաբերմունքը, քննարկեք և հիմնավորեք Ձեր կարծիքը:

**35.5** (3 միավոր) Դատողություններ արեք ազդեցությունների շուրջ, քննարկեք ստեղծագործությունը պատմամշակութային և այլ համատեքստում: